ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԴԱՀԿ-ԳՀԾՁԲ-18/ա-1

«22» մարտի 2018 թ.

ք. Երևան

ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայությունն, ի դեմս՝ **ՀՀ գլխավոր հարկադիր կատարող Արմեն Հարությունյանի** (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՎԵԲ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն Ալբերտ Տոնեյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում **Համացանցային կապի ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ **ծառայություն**)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը, ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **19500000 (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնել, իսկ Պատվիրատուն նվազեցնել այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն ք. Երևան, Հալաբյան 41/ա ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900013288023 ՀԿՀՀ 01223338	«ՎԵԲ» ՍՊԸ ք. Երևան, Կոմիտաս 60, թիվ 2 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հ/հ 1930000492570100 ՀԿՀՀ 00027623 (ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » մարտի 2018 թ. կնքված
ԴԱՀԿ-ԳՀԾՁԲ-18/Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	32411130/5	Օպտիկամանրաթելային լարանցումով կապուղիների ապահովում Պատվիրատուի Աղյուսակ 1-ում նշված բոլոր հասցեներում (այսուհետ՝ Մասնաճյուղեր) դեպի Մատակարարի համապատասխան հեռահաղորդակցական հանգույցներ, անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրումով միացման յուրաքանչյուր կետում: Աշխարհագրորեն տարբեր՝ միմյանց չհամընկնող երթուղիներ ունեցող օպտիկամանրաթելային լարանցումով հիմնական և պահուստային կապուղիների ապահովում ք.Երևան, Հալաբյան 41Ա հասցեում գտնվող Պատվիրատուի մասնաշենքից (այսուհետ՝ Գլխամաս) դեպի Մատակարարի՝ ք.Երևանում աշխարհագրորեն տարբեր տեղերում գտնվող, երկու հեռահաղորդակցական հանգույցներ: Տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի վերջնակետերում տվյալների փոխանցման երաշխավորված թողունակությունների ապահովում՝ համաձայն սույն Հավելվածի Աղյուսակ 1-ի, ինչպես նաև առանձին VLAN-ով 200Մբ/վ թողունակությամբ կապուղու ապահովում Գլխամասից դեպի ք.Գյումրի Անկախության 7 հասցեն՝ համաձայն սույն Հավելվածի Աղյուսակ 1-ի: Գլխամասում ինտերնետ հասանելիության ապահովում – 200Մբ/վ սիմետրիկ երաշխավորված (CIR) ունակությամբ, առանց տրաֆիկի որևէ սահմանափակման՝ համաձայն սույն Հավելվածի Աղյուսակ 1-ի: 32 (երեսուն երկու հատ) IPv4 իրական հասցե պարունակող հասցեների տիրույթի տրամադրում (/27 real IPv4 address range)	դրամ	19500000	1	Աղյուսակ 1-ին համաձայն	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.11.2018թ.

Տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի սպասարկման ծառայություններ

1.1. Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ստեղծել էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ Պատվիրատուի ներքին ցանցային ենթակառուցվածքում: Գլխամասում և Մասնաճյուղերում պետք է ապահովվի առնվազն 30 (երեսուն) տարբեր VLAN-երի տրամադրման և «QinQ, STP, Ethernet over MPLS» տեխնոլոգիաների օգտագործման հնարավորություն:

1.2. Մատակարարը պետք է ապահովի օպտիկամանրաթելային կապուղիների շուրջօրյա սպասարկում, բաժանորդների սպասարկման շուրջօրյա ծառայություն (Help Desk), ինչպես նաև իրականացնի տրամադրվող ծառայության շուրջօրյա վերահսկում (մոնիթորինգ):

1.3. Մատակարարը պետք է հնարավորություն ընձեռի Պատվիրատուին շուրջօրյա վերահսկել տրաֆիկի ստատիստիկ տվյալները գրաֆիկական տեսքով՝ Մատակարարի կողմից օգտագործվող վերահսկման համակարգին (Cacti կամ նմանատիպ այլ համակարգ) Պատվիրատուին համապատասխան հասանելիություն տրամադրելու միջոցով:

1.4. Գլխամասում տրամադրվող տվյալների փոխանցման տեղեկատվական ցանցի (այսուհետ՝ Կապ) հիմնական երթուղու վթարման դեպքում պետք է ապահովվի Կապի անխափան տրամադրումը պահուստային երթուղու միջոցով: Կապի տրամադրման ուղղորդումը հիմնական կապուղուց պահուստային կապուղուն (և հակառակը) պետք է կատարվի ավտոմատ կերպով՝ գործող կապուղու վթարման պահից առավելագույնը 1 (մեկ) րոպեի ընթացքում:

1.5. Գլխամասում Կապը կարող է խափանվել տարեկան ոչ ավելի, քան 4 (չորս) անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում Կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 30 (երեսուն) րոպեից ավելի ժամկետով: Մեկ ամսվա ընթացքում Գլխամասում Կապը կարող է խափանվել գումարային ոչ ավելի, քան 60 (վաթսուն) րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով Կապի խափանման ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում Գլխամասում Կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:

1.6. Յուրաքանչյուր Մասնաճյուղում Կապը կարող է խափանվել տարեկան ոչ ավելի, քան 8 (ութ) անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում Կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 30 (երեսուն) րոպեից ավելի ժամկետով: Մեկ ամսվա ընթացքում յուրաքանչյուր Մասնաճյուղում Կապը կարող է խափանվել գումարային ոչ ավելի, քան 90 (ինսուն) րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով Կապի խափանման ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում տվյալ կետում Կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:

1.7. Կապի խափանման յուրաքանչյուր դեպքում Մատակարարը պարտավոր է էլեկտրոնային փոստի միջոցով (անհրաժեշտության դեպքում նաև հեռախոսակապի միջոցով) անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին խափանման մասին: Կապի խափանումը վերացնելուց հետո Մատակարարը պարտավոր է էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնել Պատվիրատուին Կապի խափանման պատճառների և տևողության մասին:

1.8. Մատակարարը պետք է երաշխավորի Կապի որակի հետևալ չափանիշների ապահովումը.

1.8.1. «latency» ոչ ավելի քան 5 մվրկ,

1.8.2. «Round Trip Time» հետևյալ ամսական միջին արժեքները.

- դեպի Արցախի հանրապետություն՝ 5 վրկ,
- դեպի մոտակա միջազգային երթուղիչը՝ 30 մվրկ,
- դեպի Ռուսաստան և ԱՊՀ երկներ՝ 70 մվրկ,
- դեպի Եվրոպա՝ 150 մվրկ,
- դեպի ԱՄՆ՝ 260 մվրկ,
- այլ երկրներ՝ 360 մվրկ,

1.8.3. փաթեթների կորուստ՝ առավելագույնը 0,5%:

Աղյուսակ 1. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության ստորաբաժանումները, որտեղ Մատակարարի կողմից պետք է ապահովվեն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցումը

N	Մարզ, բնակավայր	Հասցե	Կապի տեսակ	Կապուղու երաշխավորված արագություն, Մբ/վ
1.	ք.Երևան	Հալաբյան փ. 41Ա	Ինտերնետ հասանելիություն	200
2.	ք.Երևան	Հալաբյան փ. 41Ա	Կորպորատիվ ցանց	600
3.	ք.Երևան	Հալաբյան փ. 41Ա	Կորպորատիվ ցանց	200
4.	Արարատ, ք.Արտաշատ	Լուսինյան փ. 9	Կորպորատիվ ցանց	50
5.	Արարատ, ք.Մասիս	Արարատյան փ. 3 շենք թիվ 4	Կորպորատիվ ցանց	50
6.	Արարատ, ք.Վեդի	Թումանյան փ. 3/1	Կորպորատիվ ցանց	50
7.	Արագածոտն, ք.Աշտարակ	Էջմիածնի խճ. 65	Կորպորատիվ ցանց	50
8.	Արագածոտն, ք.Թալին	Խանջյան փ. 13	Կորպորատիվ ցանց	50
9.	Արմավիր, ք.Արմավիր	Սայաթ-Նովա փ. 109ա	Կորպորատիվ ցանց	50
10.	Արմավիր, ք.Էջմիածին	Կամո փ. 15	Կորպորատիվ ցանց	50
11.	Արմավիր, գ.Մյասնիկյան	Մյասնիկյան փ. 4	Կորպորատիվ ցանց	50
12.	Գեղարքունիք, ք.Գավառ	Կենտրոնական հրապարակ 4, 307ա.	Կորպորատիվ ցանց	50
13.	Գեղարքունիք, ք.Ճամբարակ	Գ.Նժդեհի փ. 125	Կորպորատիվ ցանց	50
14.	Գեղարքունիք, ք.Մարտունի	Մյասնիկյան փ. 34	Կորպորատիվ ցանց	50
15.	Գեղարքունիք, ք.Սևան	Նաիրյան 1-ին նրբ. 13	Կորպորատիվ ցանց	50
16.	Գեղարքունիք, ք.Վարդենիս	Հ.Անդրեասյան փ. 6	Կորպորատիվ ցանց	50
17.	Լոռի, ք.Այվեդի	Թումանյան փ. 8	Կորպորատիվ ցանց	50
18.	Լոռի, ք.Վանաձոր	Գ.Նժդեհի փ. 16	Կորպորատիվ ցանց	50
19.	Լոռի, ք.Ստեփանավան	Ս.Սարգսյան փ. 11	Կորպորատիվ ցանց	50
20.	Կոտայք, ք.Աբովյան	Բարեկամության փ. 1	Կորպորատիվ ցանց	50
21.	Կոտայք, ք.Եղվարդ	Երևանյան փ. 1	Կորպորատիվ ցանց	50
22.	Կոտայք, ք.Հրազդան	Միկրոշրջան թաղ. փոստ 2	Կորպորատիվ ցանց	50
23.	Շիրակ, ք.Գյումրի	Անկախության հր. 7	Կորպորատիվ ցանց	50
24.	Շիրակ, ք.Գյումրի	Անկախության հր. 7	Կորպորատիվ ցանց	200
25.	Շիրակ, ք.Արթիկ	Բաղրամյան փ. 40	Կորպորատիվ ցանց	50
26.	Սյունիք, ք.Գորիս	Մաշտոցի փ. 3	Կորպորատիվ ցանց	50

27.	Սյունիք, գ.Կապան	Երկաթուղայիների փ. 4	Կորպորատիվ ցանց	50
28.	Սյունիք, գ.Մեղրի	Փարամազի փ. 7	Կորպորատիվ ցանց	50
29.	Սյունիք, գ.Սիսիան	Ադամյան փ. 35	Կորպորատիվ ցանց	50
30.	Վայոց ձոր, գ.Եղեգնաձոր	Միկոյան փ. 1/2	Կորպորատիվ ցանց	50
31.	Տավուշ, գ.Բերդ	Լ.Բեկի փ. 5	Կորպորատիվ ցանց	50
32.	Տավուշ, գ.Դիլիջան	Մյասնիկյան փ. 66	Կորպորատիվ ցանց	50
33.	Տավուշ, գ.Իջևան	Երիտասարդական փ. 1	Կորպորատիվ ցանց	50
34.	Տավուշ, գ.Նոյեմբերյան	Երևանյան փ. 4	Կորպորատիվ ցանց	50

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության
նախարարության ԴԱՀԿ ապահովող
ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ 900013288023
ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԵԲ» ՍՊԸ
գ. Երևան, Կոմիտաս 60, թիվ 2
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 22 » մարտի 2018 թ. կնքված
ԴԱՀԿ-ԳՀՇՁԲ-18/Ա-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված ժեթի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների,այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32411130/5	Համացանց	-	-	-	9750000	9750000	9750000	14625000	14625000	14625000	19500000	19500000	19500000	19500000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արդարադատության
նախարարության ԴԱՀԿ ապահովող
ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ 900013288023
ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԵԲ» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտաս 60, թիվ 2
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623

/ստորագրություն/
Օգ.Տ

Հավելված 3
«22» մարտի 2018 թ. կնքված
ԴԱՀԿ-ԳՀՇՁԲ-18/Ա-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
ՀՀ արդարադատության նախարարության
ԴԱՀԿ ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900013288023
ՀՎՀՀ 01223338

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴՐԱՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական գուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«22» մարտի 2018 թ. կնքված
ԴԱՀԿ-ԳՀՇՁԲ-18/Ա-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման արձանագրությամբ Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն